



la Biennale di Venezia

15. Mostra
Internazionale
di Architettura

Partecipazioni Nazionali

Անկախ կենսապատկեր. Հայաստանի Հանրապետության տաղավար Վենետիկի բիենալեի 15-րդ միջազգային ճարտարապետական ցուցահանդեսում

«Անկախ կենսապատկեր» խորագրով հայկական տաղավարը, տեղակայված լինելով Վենետիկի սրտում՝ Հայկական փողոցում գտնվող Մխիթարյան Միաբանության Սուրբ Խաչ եկեղեցու գավթի տարածքում, հանրությանը կներկայանա՝ որպես Հայաստանի հետանկախության շրջանի կենսապատկերային (լանդշաֆտային) քարտեզագրման մի յուրօրինակ լաբորատորիա:

Հայկական տաղավարը կենտրոնանալու է 1991-ից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածի տարածական փոխակերպումների, դրանց տարբեր դրսևորումների ուսումնասիրման ու վերամեկնաբանման գործընթացների վրա: Վենետիկում կայանալիք 15-րդ միջազգային ճարտարապետական ցուցահանդեսի ողջ ընթացքում մի շարք տարբեր գիտակարգեր ներկայացնող հետազոտող խմբեր կփորձեն մեկնաբանել հայկական կենսապատկերի տարբեր բաղադրիչները:

Թեմատիկ ուսումնասիրությունների ընթացիկ արդյունքները կվերբեռնվեն www.independentlandscape.am և www.venice2016.am) կայքերում, ինչն էլ անմիջապես կարտացոլվի վենետիկյան տաղավարի Էկրաններին՝ կարևորելով հընթացս կատարվող աշխատանքներն ու գործընթացը, ինչպես նաև վերջնական արդյունքները:

«Այս տաղավարը գալիս է ապացուցելու, որ հենց այսօր, ամեն օր, մարդկային գործունեության արդյունքում Հայաստանում փոխվում է կենսապատկերը, որը մոտ ապագայում կարող է հավակնել վերածվելու մշակութային արժեքի և արժանանալու հասարակության կամ պետության հոգածությանը», -նշում է համադրող Սարհատ Պետրոսյանն իր համադրողական տեքստում:

Այս երևույթն առավել հատկանշական դարձավ 2000 թվականին ընդունված Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի արդյունքում, որը մարդածին միջավայրի և դրա դրսևորումների կոնցեպտուալ սահմաններն Էականորեն ընդարձակեց՝ համադրելով ձեռակերտ և բնական ժառանգության սահմանները ներկա բնապահպանական դիսկուրսի հետ:

Վենետիկի բիենալեի 15-րդ միջազգային ճարտարապետական ցուցահանդեսի Հայաստանի Հանրապետության տաղավարի հանձնակատարն է Հայաստանի Հանրապետության

մշակույթի նախարարությունը, հանձինս՝ Վարդան Կարապետյանի, իսկ համադրողը՝ ճարտարապետ և քաղաքաշինարար Սարհատ Պետրոսյանը:

Տաղավարն իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության, «Պողոսյան» հիմնադրամի, «Ռենկո» ընկերության, Վահե Գաբրաշի աջակցության շնորհիվ՝ համագործակցելով «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի, Մխիթարյան Միաբանության, Իտալիաում Հայաստանի դեսպանության և «ուրբանլաբ Երևանի» հետ:

Մանրամասների համար կարող եք գրել press@independentlandscape.am հասցեով: